Հուշաթերթ

հայ գրականության օլիմպիադայի մարզային և հանրապետական փուլերի
հանձնաժողովների և մասնակիցների համար

Օլիմպիադան բացահայտում է ճիշտ կարդացողին և գրականությունը հասկացողին:

Սույն հուշաթերթը հասցեագրված է հայ գրականության օլիմպիադայի մարզային ու հանրապետական փուլերի ստուգող հանձնաժողովներին և մասնակիցներին: Հուշաթերթով ներկայացնում ենք օլիմպիադայի մարզային ու հանրապետական փուլերի՝

- առաջադրանքների շրջանակներն ու ձևաչափերը,
- առաջադրանքների կատարմանը ներկայացվող պահանջներն ու մոտեցումները,
- ստուգման գործընթացին ներկայացվող պահանջներն ու մոտեցումները,
- գնահատման միավորներն ըստ բաղադրիչների:

Առաջադրանքների շրջանակներն ու ձևաչափերը

- Առաջադրանքները կազմվելու են հայ գրականության դասական և ժամանակակից գրողների ծրագրային և լրացուցիչ ընթերցանության համար նախատեսված արձակ և չափածո գործերի, ինչպես նաև բանահյուսության նմուշների հիման վրա:
- Առաջադրանքները հիմնականում ներկայացվելու են ըստ Բլումի աստիճանակարգի:

Առաջադրանքների կատարմանը ներկայացվող պահանջներն ու մոտեցումները

- Մարզային փուլում մասնակիցն աշխատելու է բնագրով կամ բնագրից վերցված հատվածով, որը տրվելու է առաջադրանքներին կից: Հանրապետական փուլի համար առաջադրանք կձևակերպվի՝ նաև առանց բնագիր կամ հատված կցելու:
- Գրականության օլիմպիադայի մասնակիցը պիտի նկատի ունենա, որ բարձր են գնահատվում գրականության իմացությունը, ստեղծագործական կարողությունները, երևակայության թռիչքն ու պատկերավոր մտածողությունը: Տվյալ որակները միշտ կօգնեն մասնակցին հետաքրքիր ու ինքնատիպ մոտեցում ցուցաբերելու առաջադրանքների լուծմանը: Աշխատանքը կդիտարկվի հաջողված, եթե մասնակիցը կիրառել է հարուստ ու բազմազան բառապաշար, պատկերավորման միջոցներ, լեզվառճական հնարներ, դրսևորել է խոսք կառուցելու ինքնօրինակ մոտեցումներ:

Ստուգման գործընթացին ներկայացվող պահանջներն ու մոտեցումները

Պատասխանները գնահատելիս հաշվի են առնվում.

- թեմայի/տեքստի ընկալման աստիճանը,
- ասելիքի փաստարկվածությունը,
- տեքստային նյութի ճիշտ և տեղին կիրառությունը,
- ստեղծագործական ու վերլուծական մտածողությունը,
- ինքնուրույն եզրահանգումներ կատարելու ունակությունը,
- դիրքորոշում արտահայտելու կարողությունը,
- խոսքի տրամաբանական կառուցվածքը,
- ոճական բազմազանություն,
- լեզվական գրագիտությունը:

Ուշադրություն

- **Տեքստը վերաշարադրել չի թույլատրվում:**
- **Ստուգվում է մտածողությունը, ոչ թե սոսկ հիշողությունը:**
- **Ընդունելի են բոլոր հիմնավորված մեկնաբանությունները, որոնք առաջադրանքի շրջանակում են:**

Կարևոր

Նախապես գրված միակ ընդունելի կամ «կատարյալ» պատասխան, համաձայն որի պիտի ստուգվի աշխատանքը, չի ենթադրվում, քանի որ նախ՝ գիտելիքների մեխանիկական վերարտադրություն պահանջող առաջադրանքներ չկան, հետո՝ պատասխանների «բանալի» տալը ակամա ստիպում է, որ ստուգողը գրավորին մոտենա տրված կառույցների շրջանակում՝ առանց շեղվելու դրանցից: **Արդյունքում՝**

- ✓ այլ ձևակերպումները համարվում են շեղում,
- ✓ գրավորը գնահատվում է ցածր,
- ✓ ինքնուրույն մտածողը հայտնվում է ոչ շահեկան վիճակում:

Աշխատանքի ծավալը առաջնային չէ. անհրաժեշտ է, որ դիտարկումները լինեն ըստ ամենայնի հիմնավորված:

Տարբերվող, ինքնատիպ, բայց հիմնավորված մեկնաբանությամբ աշխատանքը ընդունվելու և գնահատվելու է՝ անկախ ծավալից:

Միավոր չի տրվում հետևյալ դեպքերում.

- Պատասխանն ամբողջությամբ վերաշարադրանք է:
- Գաղափարը չի բխում տրված նյութից:

Միավոր է հանվում, երբ առկա են.

- ուղղագրական, կետադրական, քերականական սխալներ (1 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար),
- բառագործածության ու շարադասական սխալներ (1 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար),
- մտքի ձևակերպման սխալներ (2 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար),
- հարակից սխալներ (1 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար):

9-րդ դասարան. աշխատանքին տրվում է 50 միավոր:
10-12-րդ դասարաններ. աշխատանքներին տրվում է 60-ական միավոր:
Յուրաքանչյուր առաջադրանքի դիմաց գրված է նախատեսված առավելագույն միավորը:

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Հասմիկ Հովհաննիսյան